ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ,
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայտնի խոսք է, որ գթասրտությունն ու բարությունը ոչ մի սահման չեն ճանաչում: Չկա մի պատնեշ, որ կարողանա արգելափակել նրանց մուտքը մարդկային կյանքից ներս, որովհետև այս երկու ճշմարտությունները մարդու բնական վիճակի կենսական և անբաժանելի մասն են կազմում՝ շնչավորված Աստուծո Հոգով, «ըստ պատկերի և նմանության»: Անշուշտ, հանգամանքների, պայմանների և կանական պատճառների բերումով, այս առաքինությունները երբեմն մարդու հոգում պարուրվում են ծանր քնով և թմբիրով՝ դառնալով խորթ և անիմաստ երևույթներ: Նույնիսկ դաժան և չար նկատվող մարդը իր սրտի գաղտնարաններում անթեղված, կրում է Աստվածացան սիրո հունդերը և իր կյանքի որևէ հանգրվանում ի հայտ բերում դրանք, ստեղծագործում՝ վերածելով իրական սխրանքի: Այսպիսի մի սխրանքի անձնավորումը դարձավ Նորվեգիայի կավակ, մեծահռչակ բնեռախույզ, հետագայում Ազգերի Լիգայի նախագահ, ժամանակակիցների բնութագրմամբ՝ «Եվրոպայի խիղճ» Ֆրիտյոֆ Նանսենը:

Նանսեն անունը սերտորեն շաղկապված է փոքր ժողովուրդների իրավունքների պաշտպանության պատմությանը: Իր ամբողջ կարելիություններով, հեղինակությամբ և ունեցած դիրքով նա լծվեց իր նմանի՝ մարդու իրավունքների հաստատման գործին՝ իր անձով իսկ արտահայտելով Տիրոջ խոսքը, թե «սիրեսցես զընկեր քո, որպէս զանձն քո»:

Հատկապես մեկ՝ հայերիս համար առանձնահատուկ հնչեղություն և բովանդակություն ունի մեծ մարդասերի անունը: Ի թիվս այլ ժողովուրդների, նա Ազգերի Լիգայի ամբիոններից բազմաթիվ անգամներ իր ձայնը բարձրացրեց հանուն սեփական Հայրենիքից բռնի կերպով գաղթական և աշխարհացրիվ դարձած, իր պատմության ամենամռայլ օրերն ապրող հայ ժողովրդի: Սակայն, իրավ է ասված, որ հայտնի բնեռախույզը «կարողացավ ճեղքել մեռյալ Հյուսիսի հավերժական սառույցները և ուղի հարթել, բայց անկոր եղավ հաղթահարելու և հալեցնելու մարդկային հոգու սառույցը»: Նանսենը չսահմանափակվեց միայն ժողովուրդների դատի պաշտպանությամբ, այլև բազմաթիվ ծրագրեր մշակեց՝ նրանց կյանքը բնականոն հունի մեջ դնելու առումով, որում ներառնված էր նաև Հայաստանը ջրամատակարարմամբ ապահովելու նրա երազած ծրագիրը, որ կենսական նշանակություն ուներ նոր-նոր հավաքվող և կազմակերպվող հայության կյանքի համար: Ավա՜ղ, այդ գաղափարը ևս մնաց թղթի վրա՝ գրապահոցների մեջ:

Սույն թվականի հոկտեմբերի 10-ին Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում բացվեց Ֆրիտյոֆ Նանսենի ծննդյան 135-ամյակին նվիրված արխիվային վավերագրերից, աշխարհի կանական թանգարաններից ու գրադարաններից հավաքված Նանսենին վերաբերող նյութերի ցուցահանդեսը:

Բավականին ներկայացուցչական այս հանդիսությանը ներկա էր նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա-ն: Նորին Սրբությանն էր վերապահված ցուցահանդեսը բացելու պատիվը: Այս փաստն ինքնին ևս մեկ անգամ խոսում է հայ և նորվեգացի ժողովուրդների բարեկամության մասին՝ սրբագործված Ֆրիտյոֆ Նանսենի կողմից: Հայոց Հայրապետն իր ներկայությամբ ողջ հայ ժողովրդի հարգանքի և երախտագիտության թարգմանը եղավ նրա գործի և անվան հանդեպ. «Ես չէի կարող չընդառաջել ձեր հրավերին և այսօր ներկա չլինել այստեղ և ողջ Հայ Եկեղեցու ու ժողովրդի երախտագիտության կենդանի արտահայտությունը չհաղորդել իմ ներկայությամբ և մասնակցությամբ: Ֆրիտյոֆ Նանսենը ձեզ համար եղել է մեծ գիտնական, իսկ հայերիս համար՝ արդարության քարոզիչ ու պաշտպան... Ահա, Հայաստանի և արտասահմանի հայ ժողովրդի անունից ես խոնարհվում եմ Ֆրիտյոֆ Նանսենի փրկավետ գործին և օրհնում նրա անմեռ հիշատակը: Փառք եմ տալիս Աստծուն, որ նրա նման կավակ է շնորհել Նորվեգիայի ժողովրդին, որի բարիքները վայելել են այնքան ազգեր, նրանց շարքում նաև հայ ժողովուրդը»:

Եվ այսօրվա ապատություն նվաճած Հայաստանն ու հայ ժողովուրդը կենդանի, ապրող և շնչող թանգարան են մեծ նորվեգացու՝ ունշահախնդիր բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի համար, ում անունը անխախտելի կերպով պատմականքված է երկրի քարերին և մարդկանց սրտերին:

Մարդկության բարօրության, համերաշխության, սիրո և հանդուրժողության հաստատմանն ուղղված ջանքերն ու ձգտումները մեր օրերում նոր որակ են ստացել, հատկապես Եկեղեցիների մերձեցման և փոխըմբռնման առումով: Քրիստոսի Եկեղեցին, երկարատև խզումից հետո, ցանկանում է իր վրայից թոթափել ժամանակների փոշին և գործնականորեն պատասխանել Աստուծո կոչին. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Նաև Եկեղեցին, որպես երկնքի արքայության ներկայություն երկրի վրա, վերածվել է իրական Երկնային Արքայության, «որում ոչ գոյ ցաւ և հեծութիւն», բաժանում և պառակտում, այլ թևածում են անսակարկ սերն ու խաղաղությունը: Ընդհանրական Եկեղեցին այսօր կանգնած է այդ հրամայականի և մարտահրավերի առջև՝ հավատարմություն հայտնելով Աստուծո մարմնացյալ Որդու թափած արյանը:

Հայաստանյայց Եկեղեցին, Գարեգին Վեհափառի առաջնորդությամբ, ընդառաջ է գնում Եկեղեցու միության առաքելությանը: Բազմաթիվ հանդիպումներն ու երկխոսությունները Քաղկեդոնական Եկեղեցիների Ուղղափառ ընտանիքի Հովվապետերի, հոգևորականների և հավատացյալների հետ վկայում են Հայոց Հայրապետի նախանձախնդրության մասին՝ աստվածային սիրո առաքելությանը գործոն մասնակցություն և կատարյալ հաջողություն բերելու համար:

Այս իմաստով նշանակալից իրադարձություն էր Ռումին Ուղղափառ Եկեղեցու Հայրապետ Թեոկտիստ Պատրիարքի այցելությունը Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Հայ և Ռումին Եկեղեցիների

բարեկամությունն ու եղբայրությունը առավել մերձեցել և ամրացել էր դեռևս երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի հայրապետության օրերին: Եվ այսօր երկու Հայրապետների՝ նախ Գարեգին Վեհափառի Ռումինիա այցելությամբ՝ Ռումին Եկեղեցու անկախության 110-րդ և Պատրիարքության 75-րդ տարեդարձի առիթով, ապա Թեոկտիստ Պատրիարքի այցելությունը Սուրբ Էջմիածին նոր դուռ բացեցին երկու Եկեղեցիների առավել ջերմ հարաբերության և փոխըմբռնման համար:

Իրենց մեծ նախորդներից՝ երջանկահիշատակ Վազգեն Առաջինից և Ժուստինիան Պատրիարքից երեսուն տարի անց վերստին Սուրբ Էջմիածնում, Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի բնորոշմամբ, «հայ ժողովրդի գերագույն սրբավայրին, Սրբություն Սրբոց Մայր Աթոռի Ավագ խորանին վրա կանգնում ենք կողքին մեր սիրեցյալ եղբորը և Ռումինիայի Օրթոդոքս Եկեղեցու Հոգևոր Հովվապետին՝ Թեոկտիստ Պատրիարքին և մեր սրտերն իրար կապած, մեր հավատքը իրար շաղախած աղոթք ենք անում վասն խաղաղության աշխարհին, վասն հաստատության Եկեղեցվո և վասն սերտացման և զորացման մեր երկու Եկեղեցիներին»: